

# ՀԱՄԱԼՆԱԿ

ایران نامه

ԹՈՒԼԻՍ  
1995  
Գ. ՏԱՐԻ  
ԹԻԻ 3(13)

مجله پژوهشی ایران‌شناسان و خاورشناسان جمهوری ارمنستان  
ԱՐԵՒԵԼԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԷՍ



Պարսկուհի. 19-րդ դարի գծանկար

Այս համարում

- Խմբագրականի փոխարեն. էջ 2
- Նիկողայոս Աղոնցը և քրդերի Հայաստան ներթափանցման պատմությունը. էջ 3
- Նիկողայոս Աղոնց. Բրդերի ներթափանցումը Հայաստան. էջ 6
- Լևոն Մինասյան - 75. էջ 8
- Յարութիւն քինչ. Ծմառոնեանի նամակները Նոր Ջուղայի Սբ. Ամենափրկիչ վանքի արխիվում. էջ 9
- Կարա-կոյունլուների տիրապետության ճատատումը Հայաստանում (XV դ. սկիզբ). էջ 12
- Գեորգ դպիր Պալատեցու կյանքի և գործունեության տարեգրությունը. էջ 15
- Զրադաշտականության «Հավատո հանգանակը». էջ 16
- Զոհվող գոյակների արձակած ճառագայթման ... մասին. էջ 18
- Քրոնզե իրեր՝ Տափուշ սմբոցից. էջ 20
- Personalia: Ալեքսանդր Գրյունը երգ. Նորա Մելիքսեթյան. Կարսի Սանոսյան. էջ 23
- «Նիշարուր» իրա նագի տական կենտրոնը. էջ 24
- Հայկական ջարդերի ն մասնակցած քրդի խոստովանությունը. էջ 25
- Քրդստանը Առաջին աշխարհամարտի տարիներին. էջ 26
- Իրա նահայերի կարճեղենի տեսակագին. էջ 27
- «Մուղամը» և սուֆիզմը. էջ 28
- Ուշագրավ փաստաթուղթ. էջ 29
- Հայ բոշաներ. էջ 30

## «Նիշաբուր» իրանագիտական կենտրոնը

Նիշաբուրի անվան իրանագիտական հաստատությունը հիմնադրվել է 1979 թ.՝ իրանագետ Ֆրեյդոն Զոնեյդիի ջանքերով: Սույն հիմնարկը փաստորեն շարունակել է «Բոնյադե Ֆարհանգե Իրան» հաստատության (Իրանի մշակութային հիմնարկ) աշխատանքը, որը դադարեցրել էր իր գործունեությունը նույն թվականին: Հաստատությունը մինչև այժմ հրատարակել է ավելի քան քառասուն անուն գիրք, որոնցից արժե նշել հետևյալ աշխատությունները. «Արիա ցեղի կյանքն ու գաղթը» (Ֆ. Զոնեյդի), «Ջրվան» (իրանական տոմարը՝ Ֆ. Զոնեյդի), «Ֆալ-Էբն-Շադան Նիշաբուրի, Մոզերի պայքարը նախահայրամական Իրանում» (Ֆ. Զոնեյդի), «Մովորենք քրդերեն» (Ս. Սաֆի-պադե), Ավիգենայի «Բարնամակը» (Ֆ. Զոնեյդի), «Պահլավերենի ինքնուսույց» (Ֆ. Զոնեյդի), «Իրանական երաժշտության ներածություն» (Ֆ. Զոնեյդի), «Հայ մշակույթի նշանավոր գործիչները» (Էդ. Գերմանիկ), «Լուրերեն առածանի» (Հ. Իվադիանահ), «Իրանական ճարտարագիտության պատմություն» (դոկտ. Մ. Ֆարշադ), «Մովորենք հայերեն» (Էդ. Գերմանիկ), «Շուշթարի առածներ և ասացվածքներ» (Էմամ Զոնե Շուշթարի), «Համեմատական բառարան (հայերեն, պենդերեն, պահլավերեն, պարսկերեն...)», հատոր 1. (Էդ. Մեհրաբյան), «Նոր Ջուղայի գեղանկարչությունը» (Մ. Ղապարյան, Էդ. Գերմանիկ):

Նշվածից բացի, լույս են տեսել ազգագրական, բարբառագիտական, պատմական և այլ բնույթի մի քանի ուսումնասիրություններ: Հաստատությունն իր գործառությունն իրականացնում է մասնավոր միջոցներով և կապակերպական առնչություն չունի պետական հիմնարկների հետ:

«Նիշաբուրիի» հայկական բաժանմունքը հիմնադրվել է 1981թ., տողերիս հեղինակի ջանքերով՝ ծրագրելով Իրանի ժողովրդին ներկայացնելու հայկական մշակույթը: Պատրաստի ունենալով մեկ տասնամյակից ավելի գործեր՝ Հայկական բաժանմունքը մինչև այժմ հրատարակել է 5 աշխատություն: Որպես հայագիտական ուսումնասիրությունների կենտրոն, բաժինը հաճախ պատասխանում է իրանական գիտական, մշակութային և հասարակական հաստատությունների և բազում գիտաշխատողների հարցումներին, նրանց տրամադրում անհրաժեշտ գրականություն և գիտական աշխատություններ: Սկսած 1991 թ. բաժինը կապակերպում է ամենամայա պարբերական հանդիպումներ, ընդ որում, ամեն ամսվա վերջին չորեքշաբթի օրը՝ դասախոսություններ: Նշված դասախոսություններից հիշարժան են «Հայ իրանագիտության պատմությունից» (Էդ. Գերմանիկ), «Ակնարկ հայ լեզվաբանության» (Է. Արին), «Հայերեն և պարսկերեն լեզուները հասարակագիտական լույսի ներքո» (Էմիլիա Ներսիսյան), «Ազաբանգեղոսը և Իրանը» (Հ. Ավանեսյան), «Պարսից լեզուն և գրականությունը Հայաստանում» (Հ. Ստեփանյան), «Քրիստոնյա աղանդների դերը հայ գրերի գյուտի գործում» (Կարո Լուկաս), «Ակնարկ հայ երաժշտության» (Հ. Էդգարյան), «Հայ-իրանական դարավոր առնչությունները» (Ա. Հովույան), «Ներսես Սամվելի Ներսեսյանի կյանքն ու գործունեությունը» (Լաթիֆի, Տաջիկատան), «Նավասարդ» (Ֆ. Զոնեյդի) և այլն:

Բացի այդ, Նիշաբուրյան չորեքշաբթիներին Հայաստան և Տաջիկատան կատարած ճանապարհորդությունների տպավորությունների մասին Վեկուցումներ



«Նիշաբուր» կենտրոնի հրատարակություններից

րով հանդես են եկել Է. Արինը, Ֆ. Զոնեյդին և տողերիս հեղինակը:

«Նիշաբուր» իրանագիտական կենտրոնը հրատարակում է իր «Նամե-յե Ֆարհանգե Իրան» (Իրանի մշակութային հանդես) գիտական պարբերականը, որի էջերում տպագրվում են նաև գիտական հոդվածներ («Հր. Աճառյանը՝ իրանագետ», «Շահնամեն և հայերը», «Հայ իրանագիտության պատմությունից» - Էդ. Գերմանիկ):

Հաստատությունն ունի իր սեփական կենտրոնը՝ գրադարան, ընթերցասրահ, հանդիպումների դահլիճ, համակարգչային տպագրական սարքավորումներ, արխիվ: «Նիշաբուրը» համագործակցում է արտասահմանյան մի քանի երկրների գիտական կենտրոնների հետ (Իտալիա, Գերմանիա, Ֆրանսիա, Ճապոնիա, Տաջիկատան, Ղապախստան, Թուրքմենիա, Աֆղանստան, Հնդկաստան): Կենտրոնը լիահույս է, որ կկարողանա սերտ կապեր հաստատել նաև Հայաստանի գիտնականների հետ և պատրաստ է իր հնարավորությունների սահմաններում, ըստ ամենայնի համագործակցելով, իր նպաստը բերել հայ-իրանական պատմա-մշակութային փոխառնչությունների ուսումնասիրության արդյունավետությանը:

Էդ. Գերմանիկ  
(Թեհրան)